ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Դատական դեպարտամենտի կարիքների համար տոներների և տոներային քարտրիջների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/24» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«26» հոկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Լևոն Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար

Էդգար Մելքոնյան՝ Դատական դեպարտամենտի արձանագրային վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Արմինե Ալիխանյան՝ Դատական դեպարտամենտի հաշվապահական հաշվառման վարչության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի հաշվապահական հաշվառման վարչության առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/24» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի, ՏՈՆԷՔՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքի վերաբերյալ.

ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ն, ՏՈՆԷՔՍ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի, ՏՈՆԷՔՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի և ընթացակարգը 6-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ, 11-րդ, 15-րդ, 16-րդ չափաբաժինների մասով ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից.

- 2-րդ, 7-րդ չափաբաժինների մասով ՏՈՆԷՔՍ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից.

- 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 17-րդ չափաբաժինների մասով ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

- 1-ին, 3-րդ, 4-րդ, 8-րդ, 16-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակցի՝ ՏՈՆԷՔՍ ՍՊԸ-ի հայտը մերժել.

- 2-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 17-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակցի՝ ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի հայտը մերժել.

- 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակցի՝ ՅՈՒՆԻՔՈՄՓ ՓԲԸ-ի հայտը մերժել.

- 8-րդ, 11-րդ, 15-րդ, 16-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակցի՝ ԱԼՖԱ ԷՏԱԼՈՆ ՍՊԸ-ի հայտը մերժել:

2.2. 6-րդ չափաբաժնի մասով՝ ՏՈՆԷՔՍ ՍՊԸ-ի, ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի, 7-րդ չափաբաժնի մասով՝ ՊԱՏՐՈՆ ՌՄ ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

- ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ գնման ընթացակարգը 6-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լևոն Հովհաննիսյան

Անդամներ՝ _____ Էդգար Տոնականյան

_____ Էդգար Մելքոնյան

_____ Արմինե Ալիխանյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան